



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ5/0186/05/21

Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Դատավորներ՝

Հ. Խաչատրյան

Կ. Մաթևոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ5/0186/05/21
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող

զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

2025 թվականի ապրիլի 7-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.09.2023 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ և 24-րդ կետերը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Կոմիտեի 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ կետը: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.09.2023 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ բավարարվել, Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը մասնակիորեն՝ հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանվել է և այդ մասով փոփոխվել՝ հայցն ամբողջությամբ մերժվել է: Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը՝ բողոքարկված և չբեկանված մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Դավիթ Հունանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը, 27-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը մերժել է հայցապահանջը՝ վիճարկվող ակտի 24-րդ կետի վերաբերյալ՝ հիմնվելով քրեական գործով տրված ցուցմունքների վրա, որոնց արձանագրությունները եղել են վարչական վարույթի նյութերի մեջ և ներկայացվել են Դատարան Կոմիտեի կողմից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քրեական գործով տրված ցուցմունքները գրավոր ապացույցներ են՝ զուտ այն տեխնիկական պատճառով, որ այդ ցուցմունքներն ամրագրված են գրավոր՝ հարցաքննության արձանագրության մեջ և բերվել են Դատարան՝ որպես վարչական վարույթի նյութերի մաս:

Վերաքննիչ դատարանը խախտել է հայցվորի արդար դատաքննության իրավունքը, երբ իր վճիռի հիմքում դրել է քրեական գործով տրված ցուցմունքները (դրանց արձանագրությունները), քանի որ հայցվորը չի տվել հարց այդ ցուցմունքները տված անձանց և չի էլ ունեցել նրանց հարցաքննելու իրավունք՝ չլինելով քրեական գործին մասնակցող անձ, բացի դրանից, այդ ցուցմունքները տված անձինք չեն հարցաքննվել նաև վարչական վարույթի ընացքում:

Այս խախտումներն ունեցել են ազդեցություն գործի ելքի վրա, քանի որ վիճարկվող ակտի 24-րդ կետը հիմնված է առավելապես քրեական գործով տրված ցուցմունքների վրա:

Առկա է իրավունքի զարգացման խնդիր՝ սույն գործով կիրառված ՀՀ հարկային օրենսգրքի 350-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ: Թիվ ՎԴ/0459/05/22, թիվ ՎԴ/4225/05/22 և թիվ ՎԴ/10575/05/21 վարչական գործերով ՀՀ վարչական դատարանը ցուցաբերել է կտրուկ հակառակ մոտեցում, ինչ սույն գործով Դատարանն ու Վերաքննիչ դատարանը: Հիշյալ գործերով ՀՀ վարչական դատարանը համարել է, որ քրեական գործով տրված ցուցմունքները չէին կարող դրվել իրավաբանական անձանց տուգանելու հիմքում, քանի որ դրանք օգտագործելով՝ Կոմիտեն խախտել է արդար դատաքննության իրավունքը, և անվավեր են ճանաչվել Կոմիտեի ստուգման ակտերը՝ համարելով, որ վկաները պետք է

հարցաքննվեին վարչական վարույթի ընթացքում, որպեսզի այդ խախտումը տեղի չունենար, իսկ ՀՀ վարչական դատարանում վկաներին հարցաքննելը տեղին չէ, քանի որ վարչական ակտերն արդեն իսկ կայացվել են ոչ պատշաճ վարչարարության արդյունքում և հայցվոր իրավաբանական անձի՝ լաված լինելու իրավունքի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Կոմիտեի բողոքը դրան կցված նոր ապացույցի շնորհիվ այն դեպքում, երբ անհասկանալի է՝ այդ ապացույցն ինչի մասին է և ինչպես է ձեռք բերվել Կոմիտեի կողմից:

Վերաքննիչ դատարանը քննել է միջնորդություն՝ Կոմիտեի վերաքննիչ բողոքին կցված փաստաթուղթը գործի նյութերին կցելու վերաբերյալ, և բավարարել է այն: Ավելին, Վերաքննիչ դատարանն այդ փաստաթուղթը դրել է վիճարկվող որոշման հիմքում, քանի որ այն հետազոտելու շնորհիվ հանգել է հետևության, որ դրանով հաստատվում է, որ հայցվորը, իրոք, կանխիկ եղանակով է վճարել տրանսպորտային միջոցների դիմաց: Խնդիրն այն է, որ Կոմիտեն չի միջնորդել Վերաքննիչ դատարանին գործի նյութերին կցել բողոքին կից ներկայացված փաստաթուղթը: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ ըստ Կոմիտեի՝ դա ոչ թե նոր փաստաթուղթ է, այլ գործում եղածը, որը Դատարանը սխալ է հետազոտել:

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածն այն պարագայում, երբ չեն եղել դրա հիմքերը: Մասնավորապես, նշված հոդվածից հստակ է, որ անհրաժեշտ է, որպեսզի դատավարության մասնակիցը Վերաքննիչ դատարան ներկայացրած լինի մի ապացույց, որը սահմանված ժամկետում չի ներկայացրել վարչական դատարանում: Մինչդեռ, սույն գործով Կոմիտեն իր բողոքով պնդում է, որ այդ ապացույցը նոր չէ, եղել է գործի մեջ, սակայն Դատարանը սխալ է գնահատել դրա ապացուցողական նշանակությունը: Ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանն անցել է վերաքննության սահմանները՝ գործի նյութերին կցելով Կոմիտեի բողոքին կցված փաստաթուղթը:

Այս խախտումն ազդել է գործի ելքի վրա, քանի որ Վերաքննիչ դատարանը, հետազոտելով Կոմիտեի բողոքին կցված փաստաթուղթը, հանգել է այն հետևության, որ դրանով հաստատվում է, որ հայցվորը, իրոք, կանխիկ վճարել է տրանսպորտային միջոցների դիմաց: Սա այն պայմաններում, երբ այդ փաստաթուղթը որևիցե մեկի ստորագրություն կամ կնիք չպարունակող, անանուն աղյուսակ է և չի էլ կարող համարվել փաստաթուղթ՝ չպարունակելով որևիցե վավերապայման: Այսինքն, Վերաքննիչ դատարանը նույնիսկ սխալ է գնահատել դրա ապացուցողական նշանակությունը՝ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները:

Վերաքննիչ դատարանն անցել է վերաքննության սահմաններն այս գործով, երբ կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասն այն պայմաններում, երբ բացակայել են այն կիրառելու հիմքերը: Ավելին, Վերաքննիչ դատարանն այդ սխալից հետո Կոմիտեի բողոքին կցված փաստաթուղթը հետազոտել է, սխալ է գնահատել դրա ապացուցողական նշանակությունը և դրել է իր որոշման հիմքում՝ բավարարով Կոմիտեի բողոքը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.09.2023 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի ավագ քննիչի 15.07.2019 թվականի որոշման համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործով Ընկերությունում նշանակվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային, մաքսային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առաձին պահանջների կատարման ճշտության ստուգում կամ վերստուգում՝ Ընկերության հիմնադրման օրվանից մինչև 15.07.2019 թվականն ընկած ժամանակահատվածում, որի կատարումը հանձնարարվել է Կոմիտեի մասնագետներին **(2-րդ հատոր, գ.թ. 32-36):**

2) Կոմիտեի նախագահի 06.08.2019 թվականի թիվ 1002684/1 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում հանձնարարվել է իրականացնել համալիր հարկային վերստուգում **(2-րդ հատոր, գ.թ. 30-31):**

3) Կոմիտեի նախագահի 06.08.2019 թվականի «ՀՀ ՊԵԿ նախագահի 06.08.2019թ. թիվ 1002684/1 հանձնարարագրով անցկացվող վերստուգման շրջանակներում լրացում կատարելու մասին» թիվ Ս-1761-Ա հրամանի համաձայն՝ Ընկերությունում 06.08.2019 թվականի թիվ 1002684/1 հանձնարարագրով իրականացվող վերստուգման շրջանակներում ներառվել են հրամանում նշված ստուգվող հարցերը՝ համապատասխան ժամանակահատվածներով **(2-րդ հատոր, գ.թ. 38-39):**

4) 29.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի, 2008 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 29.04.2019 թվականին, և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC172062 վկայականը **(3-րդ հատոր, գ.թ. 54-55, 61-63):**

5) 30.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «GAZ 53-27» մակնիշի, 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 30.04.2019 թվականին, և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC174765 վկայականը **(3-րդ հատոր, գ.թ. 56-60):**

6) Համաձայն «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի, որն ընդգրկում է նաև 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին ֆիզիկական անձ Ավետիք Հարությունյանի միջոցով դուրս է գրվել գումար՝ 8.200.000 ՀՀ դրամի և 1.400.000 ՀՀ դրամի չափով, «TOYOTA LAND CRUISER թեթև մարդատար, ունիվերսալ թափքով 125/170 կվտ/ձու շարժ N 2TR0647259837A061» և «բեռնատար կողավոր, կապույտ 84/115 կվտ/ձու 838 A061» ձեռք բերելու նպատակով **(4-րդ հատոր, գ.թ. 17-18):**

7) Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի (այսուհետ նաև՝ Ակտ) 22-րդ կետի (Դրամարկղային գործառնությունների

իրականացման ճշտություն) համաձայն՝ «(...) Ստուգվող ժամանակաշրջանի համար ներկայացված փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ ընկերությունը առհաշիվ անձ հանդիսացող Ավետիք Հարությունյանի միջոցով 29.04.2019թ-ին և 30.04.2019թ-ին կանխիկ վճարման եղանակով ձեռք է բերել փրանսպորտային միջոցներ (պայմանագրերը կցվում են) համապատասխանաբար 8,200,000 և 1,400,000 դրամ արժեքներով: Խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 386 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, (...): Քանի որ խախտման գումարների հանրագումարի 5 տոկոսը կազմող մեծությունը 500 հազար դրամը չի գերազանցում, ուստի հարկ վճարողին առաջադրվում է փուլանք 500,000 դրամի չափով» **(2-րդ հատոր, գ.թ. 19-20):**

8) Ակտի 24-րդ կետի (Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրում և (կամ) ստացում (անապրանք փաստաթղթեր, հարկային հաշիվների դուրսգրման կարգի պահպանում) համաձայն՝ «(...) Ստուգվող ժամանակաշրջանում, ՀՀ հարկային օրենսգրքի 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով քրեական գործի շրջանակներում պարզված հանգամանքների, փրամադրված նյութերի, համալիր հարկային ստուգման (վերստուգման) շրջանակներում ներկայացված փաստաթղթերի ստուգման արդյունքներով պարզվել է.

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ն «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ կնքված 26.10.2017թ-ի թիվ ԼՂ-Կ-15/17, 05.02.2018թ-ի թիվ ԱՀ-Կ-01/18 և 29.03.2018թ-ի թիվ ԱՀ-Կ-06/18 «գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերի (պայմանագրերը կցվում են) համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի անվամբ դուրս է գրել արտադրանքների ապրանքների առաքման հաշվարկային փաստաթղթեր (կցվում են) այդ թվում՝ 05.12.2017թ-ի թիվ P4813558525, 06.12.2017թ-ի թիվ P3766048416, 07.12.2017թ-ի թիվ P5704856675, 13.12.2017թ-ի թիվ P1795051232, 14.12.2017թ-ի թիվ P7155417186, 15.12.2017թ-ի թիվ P9935012578, 27.04.2018թ-ի թիվ P9360318182, 30.04.2018թ-ի թիվ P0588587546 և 08.06.2018թ-ի թիվ P6250466573, որոնց գումարները կազմել են համապատասխանաբար 25,960,500 դրամ, 27,616,600 դրամ, 24,350,560 դրամ, 22,046,500 դրամ, 21,845,680 դրամ, 37,074,000 դրամ, 62,838,000 դրամ, ընդհանուր 286,833,540 դրամ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ քննության ընթացքում ձեռք բերված փաստական փյալներից ելնելով (փաստաթղթերը կցվում են), պարզվել է, որ վերը նշված հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվել առանց «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների մատակարարման, այսինքն «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր:

(...)

Արդյունքում հարկ վճարողից գանձվում է փուլանք ընդամենը 286,833,540 դրամի չափով» **(2-րդ հատոր, գ.թ. 20-21):**

9) «Հայաստան» համահայկական հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) (Գնորդ) և Ընկերության (Վաճառող) միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և

տեղադրել Արցախի շրջանների հանրակրթական դպրոցներում, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 149.474.540 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 159-162):**

10) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբաբյանի կողմից 07.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 1-ին խմբաքանակը՝ ընդհանուր 25.960.500 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 167):**

11) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Է. Պետրոսյանի կողմից 08.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 2-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 27.616.600 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 168):**

12) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի կողմից 11.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 3 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 3-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 27.654.700 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 171):**

13) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զ. Ղուլյանի կողմից 15.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 4 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 4-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 24.350.560 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 174):**

14) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վ. Մովսիսյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների

հանձնման-ընդունման թիվ 5 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 5-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 22.046.500 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 177):**

15) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 6 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 6-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 21.845.680 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 180):**

16) Հիմնադրամի (Գնորդ) և Ընկերության (Վաճառող) միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և տեղադրել Արցախի Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներում, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 74.521.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 148-151):**

17) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 04.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 1-ին խմբաքանակը՝ ընդհանուր 37.074.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 154):**

18) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 03.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի հիման վրա «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 2-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 37.447.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 155):**

19) Հիմնադրամի (Գնորդ) և Ընկերության (Վաճառող) միջև 29.03.2018 թվականին

կնքված թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և տեղադրել Արցախի Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներում, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 62.838.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 136-140):**

20) Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 11.06.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 29.03.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքը՝ ընդհանուր 62.838.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 143):**

21) ԱՀ քննչական կոմիտեի 05.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Վարդուշ Մովսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 23.06.2011 թվականին նշանակվել է Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնակատար, իսկ հոկտեմբերի 11-ից՝ բաժնի պետ: 23.12.2014 թվականի ԼՂՀ կառավարության թիվ 891-Ն որոշման համաձայն՝ Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործառույթները փոխանցվել են «Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ին՝ բացառությամբ Բերձորի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների: Վերջիններիս ֆինանսատնտեսական գործառույթներն իրականացվում են դպրոցների կողմից: Հիմնադրամի՝ ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տրամադրում նախատեսող թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի և ներկայացված գրության մեջ նշված փաստը, որ ինքը՝ ԱՀ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի պետ Վարդուշ Մովսիսյանը, Հիմնադրամից ստացել է նշված պայմանագրով նախատեսված գույքը, իրականությանը չի համապատասխանում, իր կողմից որևէ գույք չի ստացվել և չի ստորագրվել գույքի ընդունման որևէ ակտ **(2-րդ հատոր, գ.թ. 181-183):**

22) ԱՀ քննչական կոմիտեի 12.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Զորիկ Ղուլյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 03.12.2012 թվականից զբաղեցնում է ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: 01.01.2015 թվականից Կրթության բաժնից ֆինանսատնտեսական մասն ԱՀ կառավարության որոշմամբ վերցված է և հանձնված «Մարտունու շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ին: Իրեն ներկայացված 26.10.2017 թվականի թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագիրն այն մասին, որ Հիմնադրամի, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Վարդանյանի և Ընկերության տնօրեն

Ա. Հարությունյանի կողմից ԼՂՀ հանրակրթական դպրոցներին, այդ թվում՝ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի պետ Զ. Ղուլյանին տրամադրվել է գույք, չի համապատասխանում իրականությանը, քանի որ 2015 թվականից կրթության բաժինը չի զբաղվում որևէ գույքի հանձնման-ընդունման գործերով, այդ ժամանակահատվածում Կրթության բաժինն արդեն կոչվում էր Կրթության և սպորտի բաժին, իսկ բաժնի պետը՝ բաժնի վարիչ: Ինքը տեղյակ չէ, թե ինչի մասին է խոսքը: Մարտունու շրջանում կան դպրոցներ, որոնք առանձին պայմանագրերի հիման վրա ստացել են գույք, բայց դրանք նորակառույց կամ հիմնանորոգված դպրոցներ են **(2-րդ հատոր, գ.թ. 123-125):**

23) ԱՀ քննչական կոմիտեի 17.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Էդիկ Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2005 թվականից մինչև 02.07.2019 թվականը զբաղեցրել է ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: 2015 թվականից ԱՀ կառավարության որոշման հիման վրա շրջաններում ստեղծվել են ՊՈԱԿ-ներ, որոնք կոնկրետ զբաղվում են հանրակրթական դպրոցների, ինչպես նաև շրջանի կրթության և սպորտի բաժնի ֆինանսատնտեսական գործառնություններով, այսինքն, կրթության և սպորտի բաժինը զբաղվում է զուտ ուսումնադաստիարակչական գործունեությամբ, հետևաբար իրեն ներկայացրած փաստաթղթերն այն մասին, որ թե իբր ինքը 08.12.2018 թվականին ստացել է որևէ գույք և այն տրամադրել դպրոցներին, չի համապատասխանում իրականությանը: Տեղյակ չէ դրա մասին և որևէ տեղ չի ստորագրել **(2-րդ հատոր, գ.թ. 126-128):**

24) ԱՀ քննչական կոմիտեի 26.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Խորեն Վարդանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2010 թվականից զբաղեցնում է ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնը: 2017 թվականից բաժնի անունը փոխվել է և վերանվանվել շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժին: 2017 թվականից զբաղեցնում է նշված բաժնի վարիչի պաշտոնը: Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականի ԼՂ-Կ-15/17 պայմանագրով նախատեսված հավելվածի համաձայն՝ գույքհատկացման վերաբերյալ 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 6 ակտի, որի ներքև հատվածում առկա է 3 անձի ստորագրություն և 3 կլոր կնիք, ուսումնասիրության արդյունքում հայտնել է, որ այդ ակտում նշված գույքն ինքը չի ստացել և ակտը չի ստորագրել: Ընկերությունից վերջին անգամ գույք ստացել են 2015 թվականին **(2-րդ հատոր, գ.թ. 130-133):**

25) ԱՀ քննչական կոմիտեի 04.11.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Կառլեն Մարգարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 13.01.1997 թվականից մինչև 29.04.2019 թվականը զբաղեցրել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: Մինչև 2017 թվականը զբաղվել է Ստեփանակերտ քաղաքի նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառման, նրանց՝ մանկապարտեզներում ընդունելու և այդ հիմնարկների բնականոն գործնության

ապահովման խնդիրներով: Ջբաղվել է նաև դպրոցների առաջին դասարանցիների ընդունելության, 1-12-րդ դասարանների երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման, մանկավարժական աշխատողների որակավորման ու ատեստավորման հարցերով, հիմնարկների նյութատեխնիկական բազայի պահպանման և համալրման, ուսումնական հաստատությունների հիմնարար և ընթացիկ վերանորոգման հարցերով և այլ աշխատանքներով: 01.01.2015 թվականից բաժնի կենտրոնացված հաշվապահության ապակենտրոնացումից հետո զբաղվել է միայն հիմնարկների սովորողների ուսումնադաստիարակչական և աշխատողների մանկավարժական բնույթի հարցերով, չի իրականացրել ֆինանսատնտեսական գործառույթներ (գույքի ձեռքբերում, շենքերի կապիտալ և ընթացիկ վերանորոգում, աշխատողների աշխատավարձերի պատրաստում, ներկայացում, լիազորագրերի տրամադրում և այլն), քանի որ համաձայն ԱՀ կառավարության որոշման՝ այդ լիազորությունները փոխանցված էին հիմնարկների ղեկավարներին: Իրեն ներկայացված Հիմնադրամի, Ընկերության տնօրենների և իր միջև 29.03.2018 թվականին (ԱՀ-Կ-06/18) և 05.02.2018 թվականին (ԱՀ-Կ-01/18) պայմանագրեր չեն կնքվել: Նշված պայմանագրերի հիման վրա կազմված երեք ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման ակտերի (03.05.2018 թվականի, 04.05.2018 թվականի և 11.06.2018 թվականի) բովանդակությանը ծանոթ չէ, նման անհատների հետ նշված ժամանակահատվածում չի առնչվել, ակտերում առկա ստորագրությունները և կնիքներն իր կողմից չեն դրվել, քանի որ այդ ժամանակահատվածում ինքը՝ որպես բաժնի վարիչ, նման գործառույթներ չի իրականացրել **(2-րդ հատոր, գ.թ. 145-146):**

26) ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի՝ ԱՀ քննչական կոմիտեի նախագահ Ի. Գրիգորյանին ուղղված 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրության համաձայն՝ «(...) նախարարության կողմից բանավոր հարցման արդյունքներով պարզվել է, որ Ասկերանի, Շահումյանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժինները, ինչպես նաև նշված շրջանների հանրակրթական դպրոցների տնօրինությունների ՊՈԱԿ-ները «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից կնքված 2017 թվականի հոկտեմբեր 26-ի ԼՂ-Կ 15/17 պայմանագրով դպրոցական գույք չեն ստացել: Վերոնշյալի գրավոր հաստատումները շրջաններից սպասում ենք» **(2-րդ հատոր, գ.թ. 134):**

27) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի թիվ 26/1 որոշման համաձայն՝ Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի դեմ Ընկերության դիմում-բողոքը մերժվել է **(1-ին հատոր, գ.թ. 22-26):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է՝

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

144-րդ հոդվածի 2-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հարկային օրենսգրքի 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները.

1) որո՞նք են Վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու լիազորության իրացման պայմանները, և կարող է, արդյո՞ք, Վերաքննիչ դատարանը կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վարչական դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե դատական ակտի բեկանման հիմքում դրվում է դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Վերաքննիչ դատարանում ընդունված ապացույցը,

2) արդյո՞ք քրեական վարույթի ընթացքում անձի կողմից տրված ցուցմունքը կարող է որպես ապացույց ընդգրկվել վարչական վարույթում և դառնալ թույլատրելի ապացույց՝ քննվող գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելու կամ հերքելու համար:

1) Անդրադառնալով 1-ին հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքը ներառում է ոչ միայն խախտված իրավունքների պաշտպանության պահանջով դատարան դիմելու, այլև՝ դատական ակտերը բողոքարկելու հնարավորությունը: Դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշման մեջ ամրագրել է, որ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, (...) պահպանումը:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի

առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (տե՛ս, *Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն, այս դատավարական սկզբունքը վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ

միջոցներ բողոքն ըստ էության, քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել (*տե՛ս* ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանը, մի կողմից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով:

Փաստորեն, վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով (*տե՛ս*, *անհայր ձեռնարկատեր Գևորգ Դավթյանն ընդդեմ* ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **վերաքննիչ դատարանն ընդունում է նույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն:** Եթե դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դատական ծախսերը, անկախ գործի ելքից, սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված չափով կրում է դատավարության այդ մասնակիցը:

Նշված իրավանորմերով կանխորոշվում է դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու օբյեկտային սահմանը, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վերաքննիչ դատարանի համար ծագում է պարտավորություն առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայելու վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի որոշումներում վերաքննության սահմանների և գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու «ex officio» սկզբունքի իրացման կապակցությամբ ձևավորված մոտեցումների համաձայն՝ վերաքննիչ դատարանը կաշկանդված է ոչ միայն վերաքննիչ բողոքում նշված պահանջով, այլև վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, ինչը բխում է բողոքի ըստ էության քննություն իրականացնելու օրենսդրական պահանջից:

Վարչական դատավարությունում վերաքննության առանձնահատկություններով և դատական այս ատյանի գործառության ղեկավարում են պայմանավորված նաև վերաքննության սահմանների համատեքստում վերաքննիչ դատարանի լիազորությունները: Մասնավորապես, վարչական դատավարությունում օրենսդիրը վերաքննիչ դատարանին օժտել է նոր ապացույցներ ընդունելու լիազորությամբ՝ եզրագծելով նշված լիազորության կիրառման պայմանները:

Անդրադարձ կատարելով ապացույցների ներկայացման թույլատրելիության պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք տարբերակվում են կախված այն հանգամանքից, թե ինչ կարգով է իրականացվում գործի քննությունը: Այսպես, **վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցներ ընդունելու ընդհանուր կանոնը հետևյալն է՝ նոր ներկայացվող ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար:**

Փաստորեն, վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված միակ նախապայմանը ներկայացվող ապացույցի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալն է, իսկ որպես այդպիսին կարող են դիտարկվել այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Պետք է ընդգծել, որ գործի լուծման համար նշանակություն ունեն այն հանգամանքները, որոնք պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի (նորմերի) ճիշտ կիրառման և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար, ինչպես նաև այն հանգամանքները,

որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են որոշակի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակում անդրադառնալով վերաքննիչ դատարանի դերին, արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի պարտադրում, որ պայմանավորվող պետությունները նախատեսեն վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն երբ կան այդպիսի դատարաններ, պետությունը պարտավորվում է ապահովել, որպեսզի այդ դատարաններում դիմումատուներն օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված հիմնարար երաշխիքներից (*տե՛ս, Andrejeva-ն ընդդեմ Լատվիայի գործով ՄԻԵԴ-ի 18.02.2009 թվականի վճիռը, կետ 97*): Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարաններում գործերի քննության նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման եղանակը կախված է քննության հատուկ առանձնահատկություններից, պետք է հաշվի առնվի ներպետական իրավական համակարգում քննության ամբողջականությունը, ինչպես նաև դրանում Վերաքննիչ դատարանի ունեցած դերը (*տե՛ս, Helmers-ն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԴ-ի 02.12.1991 թվականի վճիռը, կետ 31*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանի գործառույթային դերի հստակեցումը և դրանով պայմանավորված՝ դատավարական օրենքում համահունչ լիազորություններ նախատեսելը կարևոր են անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման, դատարանի մատչելիության, վերանայման արդյունավետության բարձրացման, դատավարության խնայողականության ու արագության և այդպիսով՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու տեսանկյունից (*տե՛ս, ըստ դիմումի «ՌԵՍՈ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության թիվ ՏԴ/2886/02/21 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2023 թվականի որոշումը*):

Ներկայացված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրացման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության, և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնելով անփոփոխ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, **եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից**, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ դատական ակտի վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իրացնում է վարչական դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը և կայացնում է նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, այսինքն՝ նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը կարող է հանդիսանալ բավարար և անհրաժեշտ պայման ՀՀ վարչական դատարանի դատական ակտը փոփոխելու համար (*տե՛ս*, «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թիվ ՎԴ/1244/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2024 թվականի որոշումը):

Վերլուծելով գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող լիազորությունների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանց հիմքում ընկած է հետևյալ ընդհանուր տրամաբանությունը. դատական ակտի բեկանման դեպքում գործը, որպես կանոն, ուղարկվում է վարչական դատարան՝ նոր քննության: Միևնույն ժամանակ, վերաքննիչ դատարանը կարող է գործին վերջնական լուծում տալ (այդ թվում նաև՝ բեկանել և փոփոխել դատական ակտը) միայն խիստ որոշակի, օրենքով սահմանված դեպքերում (եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից): Ընդ որում՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառման համար անհրաժեշտ պայմաններն առաջին հերթին դիտվում են որպես այդ լիազորության իրավաչափ կիրառման երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորության նախատեսումը կոչված է նաև բացառելու դատական շրջապտույտը, այն բխում է դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից այնքանով, որքանով երաշխավորում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկը՝ ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջի իրացումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը ենթակա է իրացման այն դեպքերում, երբ վերաքննության գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված՝ վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ արձանագրված

նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները վերացնելու համար, և առաջին ատյանի դատարանում գործի նոր քննությունն անհրաժեշտ է կայացվելիք դատական ակտի արդարացիությունը և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ապահովելու առումով:

Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, բողոքարկված դատական ակտը բեկանելուց հետո նոր դատական ակտ կայացնելու կամ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս, վերաքննիչ դատարանը պետք է գնահատի, թե որքանո՞վ է վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունն ապահովելու և արձանագրված դատական սխալները վերացնելու համար: Ընդ որում, **բոլոր այն դեպքերում, երբ վերաքննության գործառուօթային առանձնահատկությունները թույլ են տալիս լուծել նշված խնդիրները, վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացումը՝ ելնելով դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից** (տե՛ս, թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.12.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ թեև օրենսդիրը, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին վերապահելով գործը նոր քննության ուղարկելու լիազորություն, ուղղակիորեն չի սահմանել այս լիազորությունն իրացնելու հիմքերը, այնուհանդերձ, Օրենսգրքի վերը նշված նորմերն իրենց համակցության մեջ ուրվագծում են գործը նոր քննության ուղարկելու լիազորությունն իրացնելու հիմքերը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործը նոր քննության ուղարկելու լիազորության իրացումը հնարավոր և անհրաժեշտ է այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված՝ առաջին ատյանի դատարանի թույլ տված դատավարական կամ նյութական իրավունքի տվյալ սխալը չի կարող վերացվել վերաքննիչ դատարանի կողմից: Նոր քննության անհրաժեշտությունն առկա է, երբ առաջին ատյանի թույլ տված դատական սխալը վերացնելու համար պահանջվում են այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կատարելու իրավասությամբ վերաքննիչ ատյանն օժտված չէ: (...) **Եթե վերաքննիչ դատարանը բավարար հիմքեր ունի Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունն իրացնելու համար, սակայն փոխարենը գործն ուղարկում է նոր քննության, նման իրավիճակում վտանգվում է արդարադատության արդյունավետության շահը, այդ թվում՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի կատարումը** (տե՛ս, *Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Սուսաննա և Թամարա Նալբանդյաններ, թիվ ՎԴ/11184/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2024 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացվող որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը բովանդակում է՝

«1) (...) գ. այն փաստերը, որոնք հաստատել է վարչական դատարանը և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի մասով վարչական դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե վարչական դատարանի հաստատած փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում, կամ վարչական դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում՝ պատճառաբանելով նման եզրահանգումը և հղում կատարելով վարչական դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

դ. այն փաստերը, որոնք չի հաստատել վարչական դատարանը, և այդ հանգամանքը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանը վարչական դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված՝ հղում կատարելով վերաքննիչ բողոք բերած անձի համապատասխան դիրքորոշմանը և առաջին ատյանի դատարանի հետազոտած այն ապացույցներին, որոնք ընկած են փաստի հաստատման հիմքում,

ե. այն փաստերը, որոնք հաստատել է վերաքննիչ դատարանը (...):

Նշված իրավակարգավորումների բովանդակությունից ակնհայտ է որ վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և իրավասու չէ միաժամանակ հաստատված համարել նոր փաստական հանգամանքներ: Ստորադաս դատարանի կողմից հաստատված և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել միայն այն դեպքում, երբ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքում վիճարկում է դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը: Ընդ որում՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել ոչ միայն այն դեպքում, երբ ստորադաս դատարանի հետազոտած ապացույցների շրջանակը բավարար է այդ փաստերի շրջանակը փոփոխելու համար, այլև վերաքննիչ դատարան ներկայացված և ընդունված նոր (լրացուցիչ) ապացույցների հիման վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննության վարույթում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու «ex officio» սկզբունքի իրացումից բխող առանձնահատկություններով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանն օժտված է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նոր (լրացուցիչ) ապացույցներ ընդունելու լիազորությամբ: Ուստի, ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը փոփոխելու վերաքննիչ դատարանի լիազորությունը սերտորեն կապված է վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների հետազոտման և գնահատման գործընթացի հետ:

Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը պարունակում է հիմնավորումներ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները ոչ ճիշտ հաստատված լինելու վերաբերյալ, և այդ կապակցությամբ ներկայացվում են նոր (լրացուցիչ) ապացույցներ, ապա վերաքննիչ դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջների պահպանվածության դեպքում ընդունելով նոր ապացույցները, բողոքի հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու օրենսդրական պահանջից ելնելով, պարտավոր է հետազոտել և գնահատել դրանք և պարզել գործի ելքի վրա դրանց ազդեցությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցի ընդունումը չի կարող կապվել բացառապես դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորության կիրառման հետ, և վերաքննիչ դատարանը կարող է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վարչական դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը, քանի որ նոր ապացույցի հիմքով բողոքարկված դատական ակտը բեկանելուց հետո նոր դատական ակտ կայացնելու կամ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանն առաջնորդվում է այն նույն չափորոշիչներով, որոնք կիրառման են ենթակա ցանկացած գործով: Այսինքն, նոր ապացույցի հիմքով դատական ակտը բեկանելու դեպքում ևս դատական ակտը փոփոխելու լիազորությունն իրացնելիս դրա կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել, եթե հիմնավորվում է արդարադատության արդյունավետության շահի առկայությունը, և վարչական դատարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ գործի նոր քննության անհրաժեշտությունն առկա է, երբ առաջին ատյանի թույլ տված դատական սխալը վերացնելու համար պահանջվում են այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կատարելու իրավասությամբ վերաքննիչ ատյանն օժտված չէ, օրինակ՝ եթե առկա է լրացուցիչ ապացույցների հավաքագրման անհրաժեշտություն: Իսկ այն պարագայում, երբ վերաքննիչ դատարանն ունի բավարար հիմքեր դատական ակտը փոփոխելու լիազորությունն իրացնելու համար, ապա վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացումը:

Վերաքննիչ դատարանին նման գործիքակազմի տրամադրումը նպատակ ունի ապահովելու արդարադատության ավելի արագ և արդյունավետ իրականացումը, քանի որ այդպիսով երաշխավորվում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկը՝ ողջամիտ ժամկետում գործի քննությունը: Հակառակ մեկնաբանության պարագայում՝ եթե վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցի ընդունումն ինքնին դիտարկվի որպես դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորության կիրառման բավարար պայման, ապա դա կարող է հանգեցնել կրկնակի դատական շրջապտույտի, ինչը չի բխում դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից:

2) Անդրադառնալով 2-րդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության՝ «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմինների հիմնական գործառնությանին նպատակը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված պատվիրանների կատարումն է՝ իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է, որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Մինևնույն ժամանակ, նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դրանում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում (տե՛ս, Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային

կազմակերպություններում, հիմնարկներում (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) գործունեության և քաղաքաշինական օբյեկտներում ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորող, ինչպես նաև դրանց իրականացման միասնական կարգը սահմանող օրենք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ (*տե՛ս*, «*Ռուբեն Գևորգյան*» ՍՊԸ-ն *ընդդեմ* ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը հարուցվում է համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ, որին հաջորդում է այդ վարույթի **ընթացիկ փուլը**՝ հանձնարարագրում նշված պաշտոնատար անձանց կողմից փաստացի ստուգողական գործողությունների իրականացումը սահմանված ժամկետներում և ստուգման նպատակների շրջանակներում, որը եզրափակվում է տեղեկանքի կազմմամբ, եթե խախտումներ չեն հայտնաբերվում և ակտի կազմմամբ, եթե հայտնաբերվում են խախտումներ (*տե՛ս*, «*Էյ Քեյ Էյ Ջի*» ՍՊԸ-ի *տնօրեն Արթեն Ղուլյանն ընդդեմ* ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշումը):

Վերոգրյալից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչական վարույթն ու դրա արդյունքում ընդունվող վարչական ակտը պետք է համապատասխանեն ինչպես կոնկրետ հարաբերությունները կարգավորող առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, այնպես էլ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնք իրենց ամրագրումն են ստացել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում, վարչական իրավունքի ոլորտում որոշակիացնում են սահմանադրական սկզբունքները՝ հանդիսանալով վարչարարության նորմատիվ ուղենիշներ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչարարության հիմնարար սկզբունքները վարչական իրավունքի առանցքային հիմնադրույթներն են, որոնք, ընդհանուր առմամբ, ուղղորդում են վարչական մարմինների ցանկացած գործունեություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչարարության հիմնարար սկզբունքների կարգավորիչ դերը կայանում է նրանում, որ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը պետք է համապատասխանի նշված սկզբունքներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել են վարչարարության հետևյալ հիմնարար սկզբունքները.

- վարչարարության օրինականության սկզբունքը (հոդված 4-րդ),
- ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքը (հոդված 5-րդ),
- հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը (հոդված 6-րդ),
- կամայականության արգելքի սկզբունքը (հոդված 7-րդ),
- վարչարարության համաչափության սկզբունքը (հոդված 8-րդ),
- առավելագույնի սկզբունքը (հոդված 9-րդ),
- հավաստիության կանխավարկածի սկզբունքը (հոդված 10-րդ),
- տնտեսվարության սկզբունքը (հոդված 11-րդ):

Վերոգրյալ սկզբունքներից առանձնանում է վարչարարության օրինականության սկզբունքը, որը վարչական մարմիններին պարտադրում է հետևել օրենքների պահպանմանը: Նշված սկզբունքն ունի առանցքային նշանակություն և ընկած է մյուս բոլոր սկզբունքների հիմքում, քանի որ առանց այդ սկզբունքի մյուսներն իմաստազրկվում են:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հատուկ ընդգծել, որ օրինականության սահմանադրական սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որպեսզի գործադիր իշխանության մարմինների գործունեությունը հիմնված լինի ՀՀ Սահմանադրության և օրենքի վրա: Օրենքի գերակայությունը նշանակում է, որ որևէ վարչարարություն չի կարող հակասել օրենքին կամ օրենքի ուժով վարչական մարմնի համար պարտադիր այլ իրավական ակտերին: Օրենքը գերակայում է վարչարարության հանդեպ, հետևաբար, ցանկացած վարչարարություն ենթարկվում, ստորադասվում է օրենքին թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության, հետևաբար ակներև է, որ վարչարարությունը եզրափակող իրավական ակտերը (նորմատիվ և վարչական) կամ ռեալ ակտերը (գործողությունները և անգործությունը) նույնպես պետք է համապատասխանեն օրենքին: Դրանք պետք է ընդունվեն կամ ձեռնարկվեն օրենքով սահմանված կարգով:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ վարչական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողություն պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վարչարարությունը բնորոշվում է որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ (տե՛ս, Գոհար Հակոբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.05.2022 թվականի որոշումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, **ընթացիկ** և եզրափակիչ փուլերից: Հարուցման փուլը մեկնարկում է անձի (անձանց) դիմումով կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ, **ընթացիկ փուլի ընթացքում իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները**, որն ավարտվում է եզրափակիչ փուլով՝ վարչական ակտի ընդունմամբ:

Վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչարարությունը՝ վարչական վարույթի ընդհանուր դրույթները, հարուցման և ընթացիկ փուլերի առանձնահատկությունները սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ բաժնում (հոդվածներ 19-52):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական վարույթի ընթացիկ փուլին վերաբերող դրույթներն ամրագրված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի «Վարչական վարույթի ընթացիկ փուլը» վերտառությամբ գլխում, որում մասնավորապես զետեղված են սկզբունքային դրույթներ վարչական վարույթի ընթացիկ փուլում վարչական մարմնի գործողությունների պատշաճ կատարման երաշխավորման նպատակով: Մասնավորապես, օրենքը սահմանում է վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը, վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը, վարույթի մասնակիցներին լսելու պարտականությունը, վարչական վարույթի նյութերի մատչելիությունը, վարույթի մասնակիցներին օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև վարչական վարույթի վերաբերյալ գործում առկա փաստաթղթերի թերությունները վերացնելու պարտականությունները: Օրենքը նախատեսում է նաև վարչական վարույթի ընթացքում ապացույցների գնահատման կանոններ՝ սահմանելով, որ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար (տե՛ս, Հայկարամ Հակոբյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության թիվ ՎԴ/7494/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2024 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն ընդհանուր առմամբ չի կարգավորում վարչական վարույթի ընթացիկ փուլը, մասնավորապես այն, թե ինչպես պետք է ընթանա վարչական ակտ ընդունելու գործընթացը, ուստի վարչական վարույթի ընթացակարգը զգալի չափով որոշում է վարչական մարմինը:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթի ընթացիկ փուլը վարչական մարմինների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթի հարուցումից հետո սկսվում է բովանդակային ստուգում, այսինքն՝ ստուգվում է, թե արդյո՞ք առկա են վարչական ակտի ընդունման կամ չընդունման նախադրյալներ: Դրա համար անհրաժեշտ է, որ վարչական մարմինը՝

- պարզի գործի էական փաստական հանգամանքները,
- որոշի, թե որ իրավական ակտերը (նորմերը) պետք է կիրառվեն,
- որոշի, թե գործով պարզված փաստական հանգամանքներն արդյո՞ք համընկնում են կիրառման ենթակա իրավական ակտերի (նորմերի) կարգավորումների հետ,
- որոշի, թե ինչ միջոցներ (իրավական հետևանքներ) պետք է ձեռնարկվեն (կիրառվեն):

Ընդ որում՝ վերը թվարկված գործողությունները փոխկապակցված են: Միևնույն ժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նախատեսել է որոշակի գործիքներ ու սահմանել է դրանց գործադրման սկզբունքները, որոնք վարչական մարմինը պարտավոր է կիրառել և պահպանել վարչական վարույթի ընթացիկ փուլում՝ ապահովելով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, **ցուցմունքները**, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու պարտականությունը դնելով վարչական մարմնի վրա՝ օրենսդիրը միաժամանակ վերջինիս օժտել է ապացույցներ ձեռք բերելու լիազորությամբ: Ըստ այդմ՝ վարչական մարմինն է որոշում, թե գործի փաստական հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու նպատակով կոնկրետ ինչ ապացույցներ է անհրաժեշտ ներառել վարույթում: Նշվածը, սակայն, չի նշանակում, որ վարչական վարույթի մասնակիցները զրկված են

ապացույցներ ներկայացնելու, վկա ներգրավելու և(կամ) փորձաքննություն նշանակելու միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների ներգրավումը պետք է իրավական առումով թույլատրելի լինի: Անթույլատրելի ապացույցները, ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ չեն կարող վարչական վարույթի ընթացքում հետազոտման առարկա դառնալ, դրանցով չեն կարող հաստատվել կամ հերքվել ապացուցման ենթակա հանգամանքները: Ի վերջո անթույլատրելի ապացույցները չեն կարող դրվել վարչական ակտի հիմքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ հարկային հսկողություն իրականացնելու նպատակով հարուցված վարչական վարույթում հարկային մարմնի կողմից օգտագործման ենթակա տեղեկությունների առնչությամբ օրենսդիրը ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսել է առանձին կարգավորումներ:

Այսպես. ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինը հարկային հսկողություն իրականացնելիս օգտագործում է հետևյալ տեղեկությունները՝ քրեական վարույթ իրականացնող մարմինների տրամադրած՝ հարկման համար հիմք հանդիսացող տվյալները:

Այսինքն, հատուկ օրենսդրական կարգավորմամբ օրենսդիրը հնարավոր է համարել վարչական վարույթից դուրս, մասնավորապես՝ քրեական վարույթում, ձեռք բերված ապացույցի, այն է՝ քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից տրամադրված տվյալների՝ որպես ապացույց ընդգրկելը հարկային հսկողություն իրականացնելու նպատակով հարուցված վարչական վարույթում: Ըստ այդմ, վճռաբեկ դատարանը կարևորում է օրենքում օգտագործվող «տվյալներ» եզրույթի բացահայտումը:

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում «տվյալ» բառը բնորոշվում է որպես տեղեկություն, փաստ, փաստական նյութ: Այսինքն՝ ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից միայն փաստ, փաստական նյութ հանդիսացող տվյալը կարող է որպես ապացույց ներառվել հարկային հսկողություն իրականացնելու նպատակով հարուցված վարչական վարույթում, հետազոտվել, գնահատվել և հիմք հանդիսանալ հարկման համար՝ դրվելով վարչական ակտի հիմքում:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված տվյալները չեն կարող նույնացվել քրեական վարույթի ընթացքում անձի տված ցուցմունքի հետ, քանի որ վերջինս մեղադրյալի, տուժողի, վկայի կամ դատապարտյալի կարգավիճակում գործի համար նշանակություն ունեցող իրեն հայտնի հանգամանքների մասին ցուցմունքը տալիս է փաստերի սեփական ընկալմամբ և գնահատմամբ, որը կարող է չհամապատասխանել իրերի իրական դասավորությանը, մինչդեռ հարկման համար հիմք հանդիսացող տվյալների հիմքում պետք է ընկած լինեն այնպիսի անհերքելի ապացույցներ, ինչպիսիք են գործի լուծման համար էական

նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող գրավոր և իրեղեն ապացույցները:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական վարույթի ընթացքում անձի տված ցուցմունքը ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով, որպես հարկման համար հիմք հանդիսացող ապացույց, չի կարող ներգրավվել վարչական վարույթում, դառնալ հետազոտման առարկա, դրանով չեն կարող հաստատվել կամ հերքվել ապացուցման ենթակա հանգամանքները, ինչպես նաև այն չի կարող դրվել վարչական ակտի հիմքում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վարչական վարույթում վկայի ցուցմունքը, որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, դիտարկելը կանոնակարգվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը, վարույթի մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, **որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները**, որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ: Իր ցանկությամբ վկան կարող է ցուցմունքներ տալ գրավոր՝ առանց վարչական մարմին ներկայանալու: Գրավոր ցուցմունքի յուրաքանչյուր էջի վրա վկան ստորագրում է, որը հաստատվում է վարչական մարմնի կնիքով՝ ստորագրման տարվա, ամսվա և ամսաթվի նշմամբ: Վկային հարցեր տալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում նա վարչական մարմնի կողմից հրավիրվում է այդ մարմին:

Վերոշարադրյալ իրավական նորմերի համակարգված վերլուծության լույսի ներքո՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայի ցուցմունքը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, պարտադիր կերպով պետք է ձեռք բերվի կոնկրետ այն վարչական վարույթի ընթացքում, որում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկություններին տիրապետող անձը՝ որպես վկա, կարող է դրանց մասին հայտնել վարչական մարմնին: Ընդ որում, գործին ներգրավված վկան տվյալ գործին վերաբերող տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքն իր ցանկությամբ կարող է տալ նաև գրավոր՝ առանց վարչական մարմին ներկայանալու: Այդ դեպքում, սակայն, վկան պարտավոր է ստորագրել գրավոր ցուցմունքի յուրաքանչյուր էջը, որը ենթակա է հաստատման վարչական մարմնի կնիքով՝ ստորագրման տարվա, ամսվա և ամսաթվի նշմամբ:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթում վկա կարող է ներգրավվել, և նրանից վերը նշված իրավանորմով սահմանված կարգով ցուցմունք կարող է վերցվել բացառապես վարչական վարույթի ընթացիկ փուլում, և միայն այդ պարագայում վկայի ցուցմունքը կհանդիսանա թույլտարելի ապացույց՝ քննվող գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելու կամ հերքելու համար: Ընդ որում, վկային հարցեր տալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերջինս կարող է նաև հրավիրվել վարչական մարմնի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի իրավակարգավորումները բացառում են

վարչական վարույթից դուրս, այլ վարույթների, այդ թվում՝ քրեական վարույթի ընթացքում ձեռք բերված վկայի ցուցմունքը՝ որպես թույլատրելի ապացույց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայի ցուցմունքը կարող է համարվել թույլատրելի և որպես ապացույցի ինքնուրույն տեսակ կարող է վարչական վարույթի ընթացքում հետազոտվել, գնահատվել և դրվել վարչական ակտի հիմքում միայն այն պարագայում, եթե այն ձեռք է բերվել վարչական վարույթի ընթացիկ փուլում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Նշվածը կարևորվում է նաև նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն՝ վարչական ակտի իրավաչափությունը դատական վերահսկողության է ենթարկվում **վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների** և վարչական ակտի կայացման համար հիմք հանդիսացած **օրենքների հիման վրա**: Հետևաբար վկայի ցուցմունքը, որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ ձեռք բերված լինելու պարագայում միայն կարող է հետազոտվել, գնահատվել վարչական մարմնի կողմից և դրվել վարչական ակտի հիմքում: Ըստ այդմ՝ վկայի ցուցմունքի՝ վարչական վարույթում ներգրավելու, այն գնահատելու և ակտի հիմքում դնելու վարչական մարմնի գործողությունների իրավաչափությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վիճարկման հայցի շրջանակներում կարող է դառնալ դատական վերահսկողության առարկա (*տե՛ս, «ՍԱՏՈՒՐՆ-ԱԿԻԱ» ՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/1889/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.02.2025 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ և 24-րդ կետերը:

Դատարանի 15.03.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Կոմիտեի Ակտի 22-րդ կետը, իսկ Ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ հայցը մերժվել է: Հայցը՝ Կոմիտեի Ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու մասով, բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ «*«Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն ընդգրկում է 01.01.2017 թվականից մինչև 31.12.2017 թվականն ընկած ժամանակահատվածը և չի արտացոլում 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ*»:

Դրամարկղային մուտքի և ելքի օրդերների հետազոտությունից պարզվել է, որ դրանք նույնպես չեն արտացոլում ակտի՝ վիճարկվող կետում նշված տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար նախատեսված գումարների հափկացման վերաբերյալ տեղեկությունները:

29.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ «ՀԱՏՄ» ՍՊ ընկերությունը ձեռք է բերել TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L մակնիշի 2008 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 29.04.2019 թվականին և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC172062 վկայականը:

30.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ «ՀԱՏՄ» ՍՊ ընկերությունը ձեռք է բերել GAZ 53-27 մակնիշի 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 30.04.2019 թվականին և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC174765 վկայականը:

Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրերի 3.1 կետի համաձայն՝ վաճառողն իրավունքի ունի.

3.1.1. սույն պայմանագրին համապատասխան հանձնված տրանսպորտային միջոցի համար Գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

3.1.2 իր ընտրությամբ պահանջել վճարելու տրանսպորտային միջոցի համար կամ հրաժարվել պայմանագիրը կատարելուց, եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է տրանսպորտային միջոցն ընդունելուց կամ դրա համար վճարելուց:

Այսինքն, պայմանագրերի բովանդակությունը նույնպես չի կարող հիմք հանդիսանալ տրանսպորտային միջոցների համար Ընկերության կողմից վճարում կատարված լինելու փաստը հաստատելու համար:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ վարչական վարույթի նյութերով չի հիմնավորվել ապրանքի մատակարարման՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար, կանխիկ դրամով գումարի վճարման փաստը, հետևապես ակտի 22-րդ կետն ընդունվել է օրենքի խախտմամբ, ուստի այդ մասով ակտն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է բավարարման»:

Դատարանի 15.03.2022 թվականի վճռով հայցը՝ Կոմիտեի Ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու մասով, մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցներով հիմնավորվում է, որ 26.10.2017 թվականին, 05.02.2018 թվականին և 29.03.2018 ԼՂ-Կ-15/17 կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 և թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրերով նախատեսված աշխատանքները չեն կատարվել, և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր, ուստի բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու հիմքերը, հետևաբար հայցն այդ մասով ենթակա է մերժման»:

Վերաքննիչ դատարանի 29.09.2023 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ բավարարվել, Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը մասնակիորեն՝ հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանվել է և այդ մասով փոփոխվել՝ հայցն ամբողջությամբ մերժվել է: Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը՝ բողոքարկված և չբեկանված մասով, թողնվել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանի 29.09.2023 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու մասով Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) Ուսումնասիրության առարկա դարձնելով գործով ձեռք բերված ապացույցները՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

Ի սկզբանե, հայցվոր կողմը ՀՀ վարչական դատարան կրկին ներկայացված հայցադիմումով չի էլ առարկել կամ հերքել վիճարկվող ստուգման ակտի 22-րդ և 24-րդ կետերում արձանագրված իրավախախտման դեպքերի առկայությունը և նշել է նաև այն հանգամանքը, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը հանդիսանում է հայցվոր «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասով մասնակիցը /հիմք՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գնացամատյանից առ 04.03.2021 թվականը քաղվածք, 1-ին հատոր, գ.թ. 68/: Ավելին, նշյալ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրերից ծագող իրավունքները գրանցվել են և տրվել պետական գրանցման վկայականներ: Արդյունքում, կարելի է փաստել, որ սույն պարագայում կոնտրագենտների միջև պայմանագրային պարտավորությունները դադարել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի իմաստով պարզաճ կատարմամբ:

Այնուհետև, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում վերլուծության առարկա դարձնել պայմանագրերի բովանդակությանը: Այսպես, 29.04.2019 թվականի և 30.04.2019 թվականի տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի 3.4.1-ին կետերի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է սույն պայմանագիրն ստորագրելու պահին Վաճառողին վճարել սույն պայմանագրի 2-րդ կետում նախատեսված գինը»:

Վերոգրյալ պայմանագրային դրույթների վերլուծությունից հետևում է, որ պայմանագրերի գինը, ըստ պայմանավորվածության, պետք է վճարվեր պայմանագրերը ստորագրելու պահին՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին, ընդ որում, նշյալ պայմանի խախտում չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է պայմանագրերի 3.1-ին կետերին, ապա դրանց համաձայն՝ վաճառողն իրավունքի ունի՝ 3.1.1. սույն պայմանագրին համապատասխան հանձնված տրանսպորտային միջոցի համար Գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան: 3.1.2. իր ընտրությամբ պահանջել վճարելու տրանսպորտային միջոցի համար կամ հրաժարվել պայմանագիրը կատարելուց, եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է տրանսպորտային միջոցն ընդունելուց կամ դրա համար վճարելուց: Այսինքն՝ դրանք վերաբերում են այն դեպքերին, երբ գնորդը չի կատարում կամ պարզաճ չի կատարում պայմանագրից բխող պարտավորությունները, օրինակ, ժամանակին

չի վճարում պայմանագրի գինը կամ հրաժարվում է ընդունել տրանսպորտային միջոցը, մինչդեռ, սույն դեպքում հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ դիտարկումն այն մասին, որ նշյալ պայմանագրերի դրույթները կողմերը չեն պահպանել:

Ավելին, վերաքննիչ բողոքին կից վարչական մարմինը ներկայացրել է նաև «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281»» փաստաթուղթ, որն ընդգրկում է նաև 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ: Մասնավորապես, նշյալ փաստաթղթից հետևում է, որ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին ֆիզիկական անձ Ավետիք Հարությունյանի միջոցով դուրս է գրվել գումար՝ 8.200.000 ՀՀ դրամի և 1.400.000 ՀՀ դրամի չափով, «TOYOTA LAND CRUISER թեթև մարդատար, ունիվերսալ թափքով 125/170 կվ/ձու շարժ N 2TR0647259837A061» և «բեռնատար կողավոր, կապույտ 84/115 կվ/ձու 838 A061» ձեռք բերելու նպատակով: Իր հերթին, հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց առ այն, որ հիշյալ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար նախատեսված գումարները փոխանցվել են վաճառողներին անկանխիկ եղանակով: Բացի այդ, պատասխանողի վերաքննիչ բողոքի առնչությամբ հայցվոր կողմը չի ներկայացրել նաև պատասխան և չի անդրադարձել նաև իր բողոքում:

Հարկ է նկատել, որ Դատարանը հիմք չի ընդունել «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթում զեպտելված տվյալները բացառապես այն հիմնավորմամբ, որ այն ընդգրկում է 01.01.2017 թվականից մինչև 31.12.2017 թվականն ընկած ժամանակահատվածը և չի արտացոլում 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, մինչդեռ, վերաքննիչ արյանում ներկայացված փաստաթուղթը պարունակում է տվյալներ քննարկվող ժամանակահատվածի առնչությամբ:

Վերոգրյալ ապացույցների ծանրության ներքո անմիջականորեն գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոնշյալը բավարար է գալու այն եզրահանգման, որ դրանցով հիմնավորվում է ապրանքի մատակարարման՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար, կանխիկ դրամով գումարի վճարման փաստը, ինչը վկայում է այն մասին, որ վիճարկվող ստուգման ակտի 22-րդ կետն ընդունվել է օրենքի պահպանմամբ:

(...)

Համադրելով վերոգրյալը սույն գործի փաստերի հետ և հաշվի առնելով հայցով ներկայացված Ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հաստատված փաստական հանգամանքները բավարար են այդ մասով վերջնական դատական ակտ կայացնելու համար, և բողոքարկվող դատական ակտը մասնակի՝ հայցը բավարարելու մասով, փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով նոր քննության անհրաժեշտությունը բացակայում է»:

Վերաքննիչ դատարանի 29.09.2023 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասով Դատարանի 15.03.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «(...) Սույն գործի նյութերում առկա ապացույցներով հաստատվել է հանգամանքն առ այն, որ հայցվորի կողմից դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր: Այսպես, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրության համաձայն՝ նախարարության կողմից բանավոր հարցման արդյունքներով պարզվել է, որ Ասկերանի, Շահումյանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժինները, ինչպես նաև նշված շրջանների հանրակրթական դպրոցների տնօրինությունների ՊՈԱԿ-ները «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից կնքված 2017 թվականի հոկտեմբեր 26-ի ԼՂ-Կ 15/17 պայմանագրով դպրոցական գույք չեն ստացել: Վերոնշյալի գրավոր հաստատումները շրջաններից սպասում են: /հիմք՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրություն, գ.թ. 134/: Մատակարարման ենթակա ապրանքներ չստանալու հանգամանքը հաստատվել է նաև գործի նյութերում առկա վկաների հարցաքննության արձանագրություններով: Նման պայմաններում պարզվել է, որ վերջնական շահառուներին փաստացի չմատակարարելու մեղքը կրում է հենց հայցվոր ընկերությունը: Ավելին, հաշիվ-ապրանքագրերում նշված է որպես ստացող ոմն Քրիստինե Մկրտչյանը «Kristine Mkrtchyan», որի իրավական կարգավիճակը հավաստող որևէ ապացույց գործի նյութերում առկա չէ:

Այս առումով ուշադրության է արժանի նաև այն, որ վերաքննիչ բողոքով հենց հայցվոր կողմը շեշտում է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը, այսինքն՝ փաստաթուղթ ստացողը, ԱԱՀ չի վճարում, ինչը նշանակում է, որ փաստաթուղթը սույն դեպքում հիմք չէր կարող հանդիսանալ հարկերի և (կամ) վճարների հաշվարկման և (կամ) վճարման համար:

(...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առաջին արյանի դատարանը սույն գործի քննության արդյունքում իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ «(...) գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցներով հիմնավորվում է, որ 26.10.2017 թվականին, 05.02.2018 թվականին և 29.03.2018 ԼՂ-Կ-15/17 կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 և թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրերով նախատեսված աշխատանքները չեն կատարվել, և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր, ուստի բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու հիմքերը, հետևաբար հայցն այդ մասով ենթակա է մերժման (...):»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ գործի փաստերի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական

դեպարտամենտի ավագ քննիչի 15.07.2019 թվականի որոշման համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործով Ընկերությունում նշանակվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային, մաքսային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առաձին պահանջների կատարման ճշտության ստուգում կամ վերստուգում՝ Ընկերության հիմնադրման օրվանից մինչև 15.07.2019 թվականն ընկած ժամանակահատվածում, որի կատարումը հանձնարարվել է Կոմիտեի մասնագետներին **(2-րդ հատոր, գ.թ. 32-36):**

Կոմիտեի նախագահի 06.08.2019 թվականի թիվ 1002684/1 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում հանձնարարվել է իրականացնել համալիր հարկային վերստուգում **(2-րդ հատոր, գ.թ. 30-31):**

Կոմիտեի նախագահի 06.08.2019 թվականի «ՀՀ ՊԵԿ նախագահի 06.08.2019թ. թիվ 1002684/1 հանձնարարագրով անցկացվող վերստուգման շրջանակներում լրացում կատարելու մասին» թիվ Ս-1761-Ա հրամանի համաձայն՝ Ընկերությունում 06.08.2019 թվականի թիվ 1002684/1 հանձնարարագրով իրականացվող վերստուգման շրջանակներում ներառվել են հրամանում նշված ստուգվող հարցերը՝ համապատասխան ժամանակահատվածներով **(2-րդ հատոր, գ.թ. 38-39):**

29.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի, 2008 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 29.04.2019 թվականին, և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC172062 վկայականը **(3-րդ հատոր, գ.թ. 54-55, 61-63):**

30.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «GAZ 53-27» մակնիշի, 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 30.04.2019 թվականին, և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC174765 վկայականը **(3-րդ հատոր, գ.թ. 56-60):**

Համաձայն «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի, որն ընդգրկում է նաև 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին ֆիզիկական անձ Ավետիք Հարությունյանի միջոցով դուրս է գրվել գումար՝ 8.200.000 ՀՀ դրամի և 1.400.000 ՀՀ դրամի չափով, «TOYOTA LAND CRUISER թեթև մարդատար, ունիվերսալ թափքով 125/170 կվտ/ձու շարժ N 2TR0647259837A061» և «բեռնատար կողավոր, կապույտ 84/115 կվտ/ձու 838 A061» ձեռք բերելու նպատակով **(4-րդ հատոր, գ.թ. 17-18):**

Ակտի 22-րդ կետի (Դրամարկղային գործառնությունների իրականացման ճշտություն) համաձայն՝ «(...) *Ստուգվող ժամանակաշրջանի համար ներկայացված փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ ընկերությունը առհաշիվ անձ հանդիսացող Ավետիք Հարությունյանի միջոցով 29.04.2019թ-ին և 30.04.2019թ-ին կանխիկ վճարման եղանակով*

ձեռք է բերել փրանսպորտային միջոցներ (պայմանագրերը կցվում են) համապատասխանաբար 8,200,000 և 1,400,000 դրամ արժեքներով: Խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 386 հոդածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, (...): Քանի որ խախտման գումարների հանրագումարի 5 տոկոսը կազմող մեծությունը 500 հազար դրամը չի գերազանցում, ուստի հարկ վճարողին առաջադրվում է փուլանք 500,000 դրամի չափով» **(2-րդ հատոր, գ.թ. 19-20):**

Ակտի 24-րդ կետի (Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրում և (կամ) ստացում (անապրանք փաստաթղթեր, հարկային հաշիվների դուրսգրման կարգի պահպանում) համաձայն՝ «(...) Ստուգվող ժամանակաշրջանում, ՀՀ հարկային օրենսգրքի 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով քրեական գործի շրջանակներում պարզված հանգամանքների, տրամադրված նյութերի, համալիր հարկային ստուգման (վերստուգման) շրջանակներում ներկայացված փաստաթղթերի ստուգման արդյունքներով պարզվել է.

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ն «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ կնքված 26.10.2017թ-ի թիվ ԼՂ-Կ-15/17, 05.02.2018թ-ի թիվ ԱՀ-Կ-01/18 և 29.03.2018թ-ի թիվ ԱՀ-Կ-06/18 «գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերի (պայմանագրերը կցվում են) համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի անվամբ դուրս է գրել արտադրանքների ապրանքների առաքման հաշվարկային փաստաթղթեր (կցվում են) այդ թվում՝ 05.12.2017թ-ի թիվ P4813558525, 06.12.2017թ-ի թիվ P3766048416, 07.12.2017թ-ի թիվ P5704856675, 13.12.2017թ-ի թիվ P1795051232, 14.12.2017թ-ի թիվ P7155417186, 15.12.2017թ-ի թիվ P9935012578, 27.04.2018թ-ի թիվ P9360318182, 30.04.2018թ-ի թիվ P0588587546 և 08.06.2018թ-ի թիվ P6250466573, որոնց գումարները կազմել են համապատասխանաբար 25,960,500 դրամ, 27,616,600 դրամ, 24,350,560 դրամ, 22,046,500 դրամ, 21,845,680 դրամ, 37,074,000 դրամ, 62,838,000 դրամ, ընդհանուր 286,833,540 դրամ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներից ելնելով (փաստաթղթերը կցվում են), պարզվել է, որ վերը նշված հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվել առանց «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների մատակարարման, այսինքն «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր:

(...)

Արդյունքում հարկ վճարողից գանձվում է փուլանք ընդամենը 286,833,540 դրամի չափով» **(2-րդ հատոր, գ.թ. 20-21):**

Հիմնադրամի և Ընկերության (Վաճառող) միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և տեղադրել Արցախի շրջանների հանրակրթական դպրոցներում, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 149.474.540 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 159-162):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբաբյանի կողմից 07.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 1-ին խմբաքանակը՝ ընդհանուր 25.960.500 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 167):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Է. Պետրոսյանի կողմից 08.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 2-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 27.616.600 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 168):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի կողմից 11.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 3 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 3-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 27.654.700 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 171):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զ. Ղուլյանի կողմից 15.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 4 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 4-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 24.350.560 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 174):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վ. Մովսիսյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 5 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 5-րդ

խմբաքանակը՝ ընդհանուր 22.046.500 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 177):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 6 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի կրթության բաժինն ընդունել է Հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության միջև 26.10.2017 թվականին կնքված թիվ ԼԴ-Կ-15/17 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 6-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 21.845.680 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 180):**

Հիմնադրամի (Գնորդ) և Ընկերության (Վաճառող) միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և տեղադրել Արցախի Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներում, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 74.521.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 148-151):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 04.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 1-ին խմբաքանակը՝ ընդհանուր 37.074.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 154):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 03.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2 ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18 պայմանագրի հիման վրա «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտի քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքի 2-րդ խմբաքանակը՝ ընդհանուր 37.447.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 155):**

Հիմնադրամի (Գնորդ) և Ընկերության (Վաճառող) միջև 29.03.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է վաճառել իր պատրաստած, պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքը, տեղափոխել այն և տեղադրել Արցախի Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներում, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել

պայմանագրով սահմանված կարգով և չափով: Պայմանագրի գինը կազմել է 62.838.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի **(2-րդ հատոր, գ.թ. 136-140):**

Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 11.06.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ Ընկերությունը հանձնել, իսկ ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդունել է Հիմնադրամի և Ընկերության միջև 29.03.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ԱՀ Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների համար պատրաստված գույքը՝ ընդհանուր 62.838.000 ՀՀ դրամ արժողությամբ **(2-րդ հատոր, գ.թ. 143):**

ԱՀ քննչական կոմիտեի 05.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Վարդուշ Մովսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 23.06.2011 թվականին նշանակվել է Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնակատար, իսկ հոկտեմբերի 11-ից՝ բաժնի պետ: 23.12.2014 թվականի ԼՂՀ կառավարության թիվ 891-Ն որոշման համաձայն՝ Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործառույթները փոխանցվել են «Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ին՝ բացառությամբ Բերձորի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների: Վերջիններիս ֆինանսատնտեսական գործառույթներն իրականացվում են դպրոցների կողմից: Հիմնադրամի՝ ԱՀ շրջանների հանրակրթական դպրոցների համար գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տրամադրում նախատեսող թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի և ներկայացված գրության մեջ նշված փաստը, որ ինքը՝ ԱՀ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի պետ Վարդուշ Մովսիսյանը, Հիմնադրամից ստացել է նշված պայմանագրով նախատեսված գույքը, իրականությանը չի համապատասխանում, իր կողմից որևէ գույք չի ստացվել և չի ստորագրվել գույքի ընդունման որևէ ակտ **(2-րդ հատոր, գ.թ. 181-183):**

ԱՀ քննչական կոմիտեի 12.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Զորիկ Ղուլյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 03.12.2012 թվականից զբաղեցնում է ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: 01.01.2015 թվականից Կրթության բաժնից ֆինանսատնտեսական մասն ԱՀ կառավարության որոշմամբ վերցված է և հանձնված «Մարտունու շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ին: Իրեն ներկայացված 26.10.2017 թվականի թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագիրն այն մասին, որ Հիմնադրամի՝ ի դեմս գործադիր տնօրեն Ա. Վարդանյանի և Ընկերության տնօրեն Ա. Հարությունյանի կողմից ԼՂՀ հանրակրթական դպրոցներին, այդ թվում՝ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի պետ Զ. Ղուլյանին տրամադրվել է գույք, չի համապատասխանում իրականությանը, քանի որ 2015 թվականից կրթության բաժինը չի զբաղվում որևէ գույքի հանձնման-ընդունման գործերով, այդ

Ժամանակահատվածում Կրթության բաժինն արդեն կոչվում էր Կրթության և սպորտի բաժին, իսկ բաժնի պետը՝ բաժնի վարիչ: Ինքը տեղյակ չէ, թե ինչի մասին է խոսքը: Մարտունու շրջանում կան դպրոցներ, որոնք առանձին պայմանագրերի հիման վրա ստացել են գույք, բայց դրանք նորակառույց կամ հիմնանորոգված դպրոցներ են **(2-րդ հատոր, գ.թ. 123-125):**

ԱՀ քննչական կոմիտեի 17.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Էդիկ Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2005 թվականից մինչև 02.07.2019 թվականը զբաղեցրել է ԱՀ Հաղորդի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: 2015 թվականից ԱՀ կառավարության որոշման հիման վրա շրջաններում ստեղծվել են ՊՈԱԿ-ներ, որոնք կոնկրետ զբաղվում են հանրակրթական դպրոցների, ինչպես նաև շրջանի կրթության և սպորտի բաժնի ֆինանսատնտեսական գործառնությունով, այսինքն կրթության և սպորտի բաժինը զբաղվում է զուտ ուսումնադաստիարակչական գործունեությամբ, հետևաբար իրեն ներկայացրած փաստաթղթերն այն մասին, որ թե իբր ինքը 08.12.2018 թվականին ստացել է որևէ գույք և այն տրամադրել դպրոցներին, չի համապատասխանում իրականությանը: Տեղյակ չէ դրա մասին և որևէ տեղ չի ստորագրել **(2-րդ հատոր, գ.թ. 126-128):**

ԱՀ քննչական կոմիտեի 26.09.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Խորեն Վարդանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2010 թվականից զբաղեցնում է ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի պաշտոնը: 2017 թվականից բաժնի անունը փոխվել է և վերանվանվել շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժին: 2017 թվականից զբաղեցնում է նշված բաժնի վարիչի պաշտոնը: Հիմնադրամի և Ընկերության միջև 26.10.2017 թվականի ԼՂ-Կ-15/17 պայմանագրով նախատեսված հավելվածի համաձայն՝ գույքհատկացման վերաբերյալ 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 6 ակտի, որի ներքև հատվածում առկա է 3 անձի ստորագրություն և 3 կլոր կնիք, ուսումնասիրության արդյունքում հայտնել է, որ այդ ակտում նշված գույքն ինքը չի ստացել և ակտը չի ստորագրել: Ընկերությունից վերջին անգամ գույք ստացել են 2015 թվականին **(2-րդ հատոր, գ.թ. 130-133):**

ԱՀ քննչական կոմիտեի 04.11.2019 թվականի վկայի հարցաքննության արձանագրության համաձայն՝ թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկա Կառլեն Մարգարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 13.01.1997 թվականից մինչև 29.04.2019 թվականը զբաղեցրել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի պաշտոնը: Մինչև 2017 թվականը զբաղվել է Ստեփանակերտ քաղաքի նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառման, նրանց՝ մանկապարտեզներում ընդունելու և այդ հիմնարկների բնականոն գործնության ապահովման խնդիրներով: Զբաղվել է նաև դպրոցների առաջին դասարանցիների ընդունելության, 1-12-րդ դասարանների երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման, մանկավարժական աշխատողների որակավորման ու ատեստավորման հարցերով, հիմնարկների նյութատեխնիկական բազայի պահպանման և համալրման,

ուսումնական հաստատությունների հիմնարար և ընթացիկ վերանորոգման հարցերով և այլ աշխատանքներով: 01.01.2015 թվականից բաժնի կենտրոնացված հաշվապահության ապակենտրոնացումից հետո զբաղվել է միայն հիմնարկների սովորողների ուսումնադաստիարակչական և աշխատողների մանկավարժական բնույթի հարցերով, չի իրականացրել ֆինանսատնտեսական գործառույթներ (գույքի ձեռքբերում, շենքերի կապիտալ և ընթացիկ վերանորոգում, աշխատողների աշխատավարձերի պատրաստում, ներկայացում, լիազորագրերի տրամադրում և այլն), քանի որ համաձայն ԱՀ կառավարության որոշման՝ այդ լիազորությունները փոխանցված էին հիմնարկների ղեկավարներին: Իրեն ներկայացված Հիմնադրամի, Ընկերության տնօրենների և իր միջև 29.03.2018 թվականին (ԱՀ-Կ-06/18) և 05.02.2018 թվականին (ԱՀ-Կ-01/18) պայմանագրեր չեն կնքվել: Նշված պայմանագրերի հիման վրա կազմված երեք ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման ակտերի (03.05.2018 թվականի, 04.05.2018 թվականի և 11.06.2018 թվականի) բովանդակությանը ծանոթ չէ, նման անհատների հետ նշված ժամանակահատվածում չի առնչվել, ակտերում առկա ստորագրությունները և կնիքներն իր կողմից չեն դրվել, քանի որ այդ ժամանակահատվածում ինքը՝ որպես բաժնի վարիչ, նման գործառույթներ չի իրականացրել **(2-րդ հատոր, գ.թ. 145-146):**

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի՝ ԱՀ քննչական կոմիտեի նախագահ Ի. Գրիգորյանին ուղղված 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրության համաձայն՝ «(...) նախարարության կողմից բանավոր հարցման արդյունքներով պարզվել է, որ Ասկերանի, Շահումյանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժինները, ինչպես նաև նշված շրջանների հանրակրթական դպրոցների տնօրինությունների ՊՈԱԿ-ները «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից կնքված 2017 թվականի հոկտեմբեր 26-ի ԼՂ-Կ 15/17 պայմանագրով դպրոցական գույք չեն ստացել: Վերոնշյալի գրավոր հաստատումները շրջաններից սպասում ենք» **(2-րդ հատոր, գ.թ. 134):**

Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի թիվ 26/1 որոշման համաձայն՝ Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի դեմ Ընկերության դիմում-բողոքը մերժվել է **(1-ին հատոր, գ.թ. 22-26):**

Գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու մասով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ, Վճռաբեկ դատարանը նկատում է, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում Վերաքննիչ դատարանին վերագրվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում այն առումով, որ նոր ապացույց («Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթուղթը) ընդունելով՝ Վերաքննիչ դատարանն անցել է վերաքննության սահմանները, քանի որ բացակայել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմքերը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Այսպես, սույն գործով Կոմիտեի կողմից 06.05.2022 թվականին ՀՀ վերաքննիչ վարչական դատարան մուտքագրված վերաքննիչ բողոքին (հատոր 4-րդ, գ.թ. 11-14) կից ներկայացվել է նոր ապացույց՝ «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթուղթը (հատոր 4-րդ, գ.թ. 17-18): Միևնույն ժամանակ, վերաքննիչ բողոքի 3-րդ բաժնում (վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները) բողոք բերած անձը նշել է. «Սույն մասնավոր դեպքում ինչպես արդեն իսկ նշեցինք Դատարանը վիճարկվող վարչական ակտի 22-րդ կետը անվավեր է ճանաչել այն հիմնավորմամբ, որ «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն ընդգրկում է 01.01.2017 թվականից մինչև 31.12.2017 թվականն ընկած ժամանակահատվածը և չի արտացոլում 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ ուսումնասիրության առարկա դարձնելով առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ թիվ 2281 փաստաթուղթ՝ հարկ է արձանագրել, որ նրանում առկա տեղեկատվությունը վերաբերում է 2019թ. դրությամբ առկա տեղեկատվությանը, ոչ թե 2017 թվականին:

Մասնավորապես «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ թիվ 2281» փաստաթղթի համաձայն հստակ երևում է, որ 29.04.2019 թվականի և 30.04.2019թ. դրությամբ, ֆիզիկական անձ Ավետիք Հարությունյանի միջոցով կանխիկ վճարման եղանակով ընկերությունը ձեռք է բերել տրանսպորտային միջոցներ, որի արդյունքում խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը»:

Սույն գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում 07.09.2023 թվականին կայացած դատական նիստի արձանագրության (հատոր 4-րդ, գ.թ. 63-66) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով, որոշել է վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթուղթն ընդունել, կցել գործին՝ որպես լրացուցիչ ապացույց, և դրա՝ գործի ելքի վրա ազդեցության հարցին անդրադառնալ դատական ակտով:

Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նախապայմանը ներկայացվող ապացույցի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալն է՝ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման իրավաչափության համատեքստում հարկ է համարում անդրադառնալ սույն գործով վերաքննության փուլում ներկայացված նոր ապացույցի՝ «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հանգամանքի գնահատմանը:

Սույն գործով վիճարկվող Ակտի 22-րդ կետով ՀՀ հարկային օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Ընկերությանը 500.000 ՀՀ դրամի չափով տուգանք է առաջադրվել՝ նույն օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման համար այն հիմնավորմամբ, որ Ընկերությունն առհաշիվ անձ հանդիսացող Ավետիք Հարությունյանի միջոցով 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կանխիկ վճարման եղանակով ձեռք է բերել

տրանսպորտային միջոցներ համապատասխանաբար 8.200.000 և 1.400.000 ՀՀ դրամ արժեքներով:

Նման պայմաններում, վիճարկվող Ակտի 22-րդ կետի իրավաչափության մասով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելիս Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմերով արժևորվող հանգամանքներին:

Այսպես, ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով վճարումների նկատմամբ կիրառվում են հետևյալ սահմանափակումները. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման առավելագույն չափը սահմանվում է 300 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը):

Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կանխիկ դրամով գումարի վճարման նկատմամբ Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով գումարի վճարման թույլատրված չափը գերազանցող գումարների (խախտման գումարներ) հանրագումարի հինգ տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 500 հազար դրամը, և ոչ ավելի, քան երկու միլիոն դրամը:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն ապրանքների մատակարարման գործարքների դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով վճարումների նկատմամբ նախատեսել է սահմանափակումներ՝ ամրագրելով, որ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման առավելագույն չափը չպետք է գերազանցի 300.000 ՀՀ դրամը, իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3.000.000 ՀՀ դրամը: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում 300.000 ՀՀ դրամը գերազանցող ապրանքների օտարման դիմաց կատարվելիք վճարումն անկանխիկ իրականացվելու իմպերատիվ պահանջ սահմանելով, միաժամանակ նշված պահանջը չկատարելու դեպքում օրենսդիրը սահմանել է տուգանք՝ 300.000 ՀՀ դրամը գերազանցող գումարի (խախտման գումարի) հանրագումարի հինգ տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 500 հազար դրամը, և ոչ ավելի, քան երկու միլիոն դրամը:

Այսինքն, Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառման հիմքը Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելն է, որպիսի հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հարկ վճարողի կողմից կատարված՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի մասով կանխիկ վճարումը գերազանցել է 300.000 ՀՀ դրամը, կամ

արդյոք մեկ ամսվա բոլոր նմանատիպ գործարքների հանրագումարը գերազանցել է 3.000.000 ՀՀ դրամը: Հետևաբար, նշված փաստերը ներառվում են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակում, ըստ այդմ՝ դրանց վերաբերյալ տեղեկություններ պարունակող ապացույցները պետք է դիտարկվեն որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող:

Տվյալ դեպքում վիճարկվող Ակտի 22-րդ կետի իրավաչափության մասով ապացուցման առարկան հետևյալն է. արդյո՞ք Ընկերության կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված սահմանափակումների խախտում: Ուստի, «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք այն պարունակում է տեղեկություններ նշված փաստի հաստատման կամ հերքման վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վերաքննիչ բողոքին կից ներկայացված՝ «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթուղթն ընդգրկում է տվյալներ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կնքված գործարքների վերաբերյալ, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող Ակտի 22-րդ կետով Ընկերությանը դրամարկղային գործառնությունների իրականացման ճշտության գծով հարկային պարտավորություն առաջադրելու հիմքում 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին կանխիկ վճարման եղանակով համապատասխանաբար 8.200.000 և 1.400.000 ՀՀ դրամ արժեքներով տրանսպորտային միջոցներ ձեռք բերելն է՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիշյալ փաստաթուղթը պարունակում է տեղեկություններ Ընկերության կողմից Օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված սահմանափակումների խախտման փաստի առնչությամբ, հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավացիորեն այն դիտարկել է որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց, ուստի, առկա է եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմքը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ 29.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի, 2008 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի գինը կողմերի գնահատմամբ կազմում է 8.200.000 ՀՀ դրամ: Պայմանագրերի 3.1.1-րդ կետի համաձայն՝ վաճառողն իրավունքի ունի նույն պայմանագրին համապատասխան հանձնված տրանսպորտային միջոցի համար գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Պայմանագրի 3.4.1-րդ կետի համաձայն՝ գնորդը պարտավորվում է նույն պայմանագրին ստորագրելու պահին վաճառողին վճարել նույն պայմանագրի 2-րդ կետում նախատեսված գինը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 29.04.2019 թվականին և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC172062 վկայականը (3-րդ հատոր, գ.թ. 54-55, 61-63):

30.04.2019 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ավետիք Անուշավանի Հարությունյանը վաճառել, իսկ Ընկերությունը ձեռք է բերել «GAZ 53-27» մակնիշի, 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցը: Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի գինը կողմերի գնահատմամբ կազմում է 1.400.000 ՀՀ դրամ: Պայմանագրերի 3.1.1-րդ կետի համաձայն՝ վաճառողն իրավունքի ունի նույն պայմանագրին համապատասխան հանձնված տրանսպորտային միջոցի համար գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Պայմանագրի 3.4.1-րդ կետի համաձայն՝ գնորդը պարտավորվում է նույն պայմանագրին ստորագրելու պահին վաճառողին վճարել նույն պայմանագրի 2-րդ կետում նախատեսված գինը: Պայմանագրից ծագող իրավունքները գրանցվել են 30.04.2019 թվականին, և տրվել է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 06CC174765 վկայականը (3-րդ հատոր, գ.թ. 56-60):

Վերոգրյալ պայմանագրային դրույթների վերլուծությունից հետևում է, որ պայմանագրերի գինը, ըստ պայմանավորվածության, պետք է վճարվեր պայմանագրերը ստորագրելու պահին՝ համապատասխանաբար՝ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին, ընդ որում, հիշյալ պայմանի խախտում չի արձանագրվել, և հայցվոր Ընկերությունը ևս չի ներկայացրել որևէ դիրքորոշում այն մասին, որ նշված պայմանագրերի դրույթները կողմերը չեն պահպանել:

Միևնույն ժամանակ, «Հարությունյան Ավետիք՝ 1001 «Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար-հաշիվ՝ 2281» փաստաթղթից հետևում է, որ 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին ֆիզիկական անձ Ավետիք Հարությունյանի միջոցով դուրս է գրվել գումար՝ 8.200.000 ՀՀ դրամի և 1.400.000 ՀՀ դրամի չափով, «TOYOTA LAND CRUISER թեթև մարդատար, ունիվերսալ թափքով 125/170 կվտ/ձու շարժ N 2TR0647259837A061» և «բեռնատար կողավոր, կապույտ 84/115 կվտ/ձու 838 A061» ձեռք բերելու նպատակով: Միաժամանակ, հայցվոր Ընկերությունը չի ներկայացրել որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց առ այն, որ հիշյալ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար նախատեսված գումարները փոխանցվել են վաճառողներին անկանխիկ եղանակով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործի նյութերում առկա ապացույցներով հիմնավորվում է Ընկերության կողմից առհաշիվ անձ հանդիսացող Ավետիք Հարությունյանի միջոցով 29.04.2019 թվականին և 30.04.2019 թվականին տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար կանխիկ դրամով համապատասխանաբար 8.200.000 և 1.400.000 ՀՀ դրամ գումարի վճարում կատարված լինելու փաստը, ինչը բավարար է Օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված սահմանափակումների խախտման փաստի հաստատման համար, ուստի ՀՀ հարկային օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Ընկերությանը 500.000 ՀՀ դրամի չափով տուգանքի առաջադրումն իրավաչափ է:

Նման պայմաններում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բացակայել է գործի նոր քննության անհրաժեշտությունը, և Դատարանի թույլ տված դատական սխալը վերացնելու համար չեն պահանջվել այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կատարելու

իրավասությամբ օժտված է միայն ՀՀ վարչական դատարանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են եղել բավարար հիմքեր՝ Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու մասով դատական ակտը բեկանելու և փոփոխելու Վերաքննիչ դատարանի լիազորությունն իրացնելու համար:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն՝ Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 22-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու մասով, բեկանելով Դատարանի վճիռը և այդ մասով մերժելով հայցը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Ինչ վերաբերում է Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջին, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված պահանջի մասով հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 55-րդ կետի համաձայն՝ (...) անապրանք փաստաթուղթն Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պահանջներին ձևականորեն համապատասխանող հաշվարկային փաստաթուղթ է, որում նշված գործարքը (ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում) այդ փաստաթուղթը կազմած կողմերի միջև փաստացի չի կատարվել կամ կատարվել է այդ փաստաթղթում նշված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ և (կամ) 8-րդ կետով սահմանված տվյալներից մեկի կամ մի քանիսի մեծությունից 20 և ավելի տոկոսով փոքր տվյալներով: Հաշվարկային փաստաթուղթը չի համարվում անապրանք փաստաթուղթ, եթե այն դուրս գրող հարկ վճարողը, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն, կրում է գործարքը կատարելու պարտավորություն: Անապրանք փաստաթղթերը հարկ վճարողների կողմից հարկերի և (կամ) վճարների հաշվարկման և (կամ) վճարման համար հիմք չեն հանդիսանում:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը

պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անապրանք փաստաթղթեր դուրս գրած և (կամ) ստացած կազմակերպությունից, անհատ ձեռնարկատիրոջից կամ նոտարից համալիր հարկային ստուգման արդյունքներով գանձվում է տուգանք՝ գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) փաստացի կատարումը հավաստող փաստաթղթում նշված՝ այն անապրանք համարվելու համար Օրենսգրքով սահմանված շեղման (դրամական արտահայտությամբ), իսկ կողմերի միջև փաստացի գործարք կատարված չլինելու դեպքում՝ անապրանք փաստաթղթում նշված գումարի չափով: Սույն մասին համապատասխան հաշվարկված տուգանքի գումարը մեկ միլիոն դրամից պակաս լինելու դեպքում տուգանքը կիրառվում է մեկ միլիոն դրամի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքը հարկային պատասխանատվության տեսակ է, որը կիրառվում է «inter alia» **Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պահանջներին ձևականորեն համապատասխանող հաշվարկային փաստաթուղթ ստեղծելու, սակայն դրանում նշված գործարքը փաստացի տեղի չունենալու համար** (անապրանք փաստաթուղթ): Անապրանք փաստաթղթի ստեղծմանը կարող են մասնակցել երկու սուբյեկտներ (գործարքի երկու կողմերը): Անապրանք փաստաթղթի համար հարկային պատասխանատվության սուբյեկտի առնչությամբ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասը գործածում է «անապրանք փաստաթղթեր դուրս գրած և (կամ) ստացած կազմակերպություն» արտահայտությունը: Դրանից հետևում է, որ անապրանք փաստաթուղթ հայտնաբերվելու դեպքում երեք հնարավոր հետևանք կարող է առաջանալ՝

(1) պատասխանատվության ենթարկվել անապրանք փաստաթղթեր դուրս գրած կազմակերպությունը,

(2) պատասխանատվության ենթարկվել անապրանք փաստաթղթեր ստացած կազմակերպությունը,

(3) պատասխանատվության ենթարկվել անապրանք փաստաթղթեր և՛ դուրս գրած, և՛ ստացած կազմակերպությունը (*տե՛ս, «Լու-Ար-Գրուպ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/7762/05/19 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2022 թվականի որոշումը*):

Սույն գործով վիճարկվող Ակտի 24-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերությունը, Հիմնադրամի հետ կնքված 26.10.2017 թվականի թիվ ԼԴ-Կ-15/17, 05.02.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-01/18 և 29.03.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-06/18 «Գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերի համաձայն, Հիմնադրամի անվամբ դուրս է գրել արտադրանքների ապրանքների առաքման հաշվարկային փաստաթղթեր: ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում Ընկերության վերաբերյալ քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներից ելնելով՝ պարզվել է, որ հաշվարկային փաստաթղթերը դուրս են

գրվել առանց Ընկերության կողմից ապրանքների մատակարարման, այսինքն, դուրս են գրվել անապրանք փաստաթղթեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝

դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: **Ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ:** Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները (*տե՛ս «Շենքերի կառավարում» համադիրությունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ ապացույցների հետազոտման **բազմակողմանիությունը** ենթադրում է, որ գործում առկա ապացույցների ուսումնասիրության (ընկալման) ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների դատողությունն ու բացատրությունները՝ միաժամանակ իր իրավասության սահմաններում ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ստացված փաստական տվյալների արժանահավատությունը ստուգելու համար: Ապացույցների հետազոտման **լրիվությունը** ենթադրում է գործով ներկայացված (ձեռք բերված) բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ընկալում ու ստուգում, փաստերի գոյության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ և բավարար ամբողջ ապացուցողական նյութի վերլուծություն ու ստուգում: Ապացույցների հետազոտման **օբյեկտիվությունը** ենթադրում է, որ դատարանն ապացույցները

հետազոտելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերի ապացույցների հետազոտման ընթացքում՝ ապահովելով կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը և զերծ մնալով գործի ելքի կամ այս կամ այն ապացույցի արժանահավատության վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց:

Դատարանի կողմից ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունն առաջնահերթ նշանակություն ունի դրանք առանձին-առանձին ու իրենց համակցության մեջ ճիշտ գնահատելու՝ դրանց արժանահավատությունը և բավարարությունը ճիշտ որոշելու ու գործի քննության արդյունքում օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելու համար (*տե՛ս Տիգրան Հովհաննիսյանն ընդդեմ Անթրանիկ Բողոսյանի և Հայկ Մարտիրոսյանի թիվ ԵԴ/18039/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.09.2023 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատարանները հայցվոր Ընկերության կողմից անապրանք փաստաթղթեր դուրս գրված լինելու փաստի հաստատման համար հիմք են ընդունել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրությունը, ինչպես նաև նաև գործի նյութերում առկա վկաների հարցաքննության արձանագրությունները:

Սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները պատշաճ չեն գնահատել մինչդատական վարույթում վկայի տված ցուցմունքը որպես արժանահավատ ապացույց դիտարկել կամ չդիտարկելու հարցը, մասնավորապես՝ վկայի ցուցմունքը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, վարչադատավարական կարգով կարող էր հետազոտվել այն դեպքում, երբ պահպանված լիներ վկա կանչելու, մասնավորապես՝ վկայի հրավիրման, վկայի ցուցմունք տալու ընթացակարգի՝ սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում առաջացող քրեական պատասխանատվության և ցուցմունքի հետազոտման վարչադատավարական կարգը:

Սույն վարչական գործով բացակայում են Դատարանի կողմից վկաների հարցաքննության վերաբերյալ ապացույցները, հետևաբար ստորադաս դատարանները չէին կարող մինչդատական վարույթում տրված ցուցմունքները սույն վարչական գործով դիտարկել որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված վկայի ցուցմունք՝ որպես ինքնուրույն ապացույցի տեսակ, և գնահատել դրանք՝ դնելով դատական ակտի կայացման հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մինչդատական վարույթում տրված ցուցմունքները, որպես քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից հարկման համար հիմք հանդիսացող տվյալներ, ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով չէին կարող օգտագործվել որպես հարկային հսկողության համար տրամադրված տեղեկություններ, քանի որ դրանք համարվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի գնահատականը և դատողությունը՝ հիմնվելով վկայի անձնական հատկանիշների, գործին մասնակցող անձանց հետ նրա փոխհարաբերությունների վրա, այսինքն՝ վկայի ցուցմունքը հարկային վարչարարության ընթացքում համարվում է քրեական վարույթն իրականացնող

մարմնի գնահատականը և տրամաբանական վերլուծությունը դրա վերաբերյալ, ուստի, այս մասով դրանք չեն կարող համարվել ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 350-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով, որպես հարկային հսկողության համար օգտագործվող տեղեկություններ, ըստ այդմ՝ քրեական վարույթում տրված ցուցմունքները (թիվ 58214118 քրեական գործի շրջանակներում վկաներ Վարդուշ Մովսիսյանի, Զորիկ Ղուլյանի, Էդիկ Պետրոսյանի, Խորեն Վարդանյանի, Կառլեն Մարգարյանի տված ցուցմունքները) չէին կարող վարչական վարույթում օգտագործվել որպես ապացույց:

Հաջորդիվ, անդրադառնալով Ընկերության կողմից անապրանք փաստաթղթեր դուրս գրված լինելու փաստի հաստատման համար հիմք ընդունված՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Այսպես, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի՝ ԱՀ քննչական կոմիտեի նախագահ Ի. Գրիգորյանին ուղղված 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրության համաձայն՝ «(...) նախարարության կողմից բանավոր հարցման արդյունքներով պարզվել է, որ Ասկերանի, Շահումյանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների վարչակազմերի կրթության և սպորտի բաժինները, ինչպես նաև նշված շրջանների հանրակրթական դպրոցների տնօրինությունների ՊՈԱԿ-ները «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության կողմից կնքված **2017 թվականի հոկտեմբեր 26-ի ԼՂ-Կ 15/17** պայմանագրով դպրոցական գույք չեն ստացել: Վերոնշյալի գրավոր հաստատումները շրջաններից սպասում ենք» **(2-րդ հատոր, գ.թ. 134):**

Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ վիճարկվող Ակտի 24-րդ կետով Ընկերությանն անապրանք փաստաթղթեր դուրս գրելու իրավախախտում է վերագրվել Հիմնադրամի հետ կնքված **26.10.2017 թվականի թիվ ԼՂ-Կ-15/17, 05.02.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-01/18 և 29.03.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-06/18 «Գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերի** համաձայն Հիմնադրամի անվամբ առանց Ընկերության կողմից ապրանքների մատակարարման հաշվարկային փաստաթղթերը դուրս գրվելու հիմքով, մինչդեռ, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրությունը վերաբերում է միայն Ընկերության կողմից Հիմնադրամի հետ կնքված **26.10.2017 թվականի թիվ ԼՂ-Կ-15/17** պայմանագրին, ինչը նշանակում է, որ նշված գրությունը 05.02.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-01/18 և 29.03.2018 թվականի թիվ ԱՀ-Կ-06/18 «Գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերով նախատեսված գույքերի մատակարարման փաստի առնչությամբ որևէ ապացուցողական նշանակություն ունենալ չի կարող:

Բացի այդ, նշված գրությունը նույնիսկ Ընկերության կողմից Հիմնադրամի հետ կնքված 26.10.2017 թվականի թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրի մասով չի կարող դիտարկվել որպես Ընկերության կողմից անապրանք փաստաթղթեր դուրս գրված լինելու փաստը հավաստող պատշաճ ապացույց, քանի որ դրանում ընդամենը արտացոլված են բանավոր հարցման արդյունքներով ստացված տեղեկություններ, որոնք որևէ կերպ չեն կարող հիմք ընդունվել թիվ ԼՂ-Կ-15/17 պայմանագրով նախատեսված գույքի մատակարարման փաստը կասկածի տակ

դնելու համար, այն պարագայում, երբ սույն գործի նյութերում առկա են ԼՂ-Կ-15/17 պայմանագրով նախատեսված գույքի մատակարարման վերաբերյալ հանձնման-ընդունման ակտեր: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շ. Աղաբաբյանի կողմից 07.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Հադրուֆի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Է. Պետրոսյանի կողմից 08.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ժ. Դավթյանի կողմից 11.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 3, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զ. Ղուլյանի կողմից 15.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 4, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վ. Մովսիսյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 5, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանի կողմից 18.12.2017 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 6, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 04.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 1, Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 03.05.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման թիվ 2 ակտերից և Հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի, Ընկերության տնօրենի և ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի կողմից 11.06.2018 թվականին կազմված ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման ակտից հետևում է, որ Ընկերությունն իրականացրել է 26.10.2017 թվականին կողմերի միջև կնքված թիվ ԼՂ-Կ-15/17, 05.02.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-01/18, 29.03.2018 թվականին կնքված թիվ ԱՀ-Կ-06/18 պայմանագրերով նախատեսված գույքերի մատակարարում, այդ հանձնման-ընդունման ակտերի վրա առկա են կողմերի ստորագրությունները, այսինքն, Ընկերությունը պայմանագրերով նախատեսված իր պարտականությունը կատարել է:

Նման պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի նյութերում, բացի ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրությունից, որը, ինչպես արդեն նշվեց, գույքի մատակարարում կատարված չլինելու փաստի հաստատման տեսանկյունից արժանահավատ ապացույց դիտարկվել չէր կարող, և թիվ

58214118 քրեական գործի շրջանակներում վկաներ Վարդուշ Մովսիսյանի, Զորիկ Ղուլյանի, Էդիկ Պետրոսյանի, Խորեն Վարդանյանի, Կառլեն Մարգարյանի տված ցուցմունքներից, որոնք առհասարակ չէին կարող վարչական վարույթում օգտագործվել որպես ապացույց, Ընկերության կողմից անապրանք փաստաթղթեր դուրս գրված լինելու փաստի հաստատմանն ուղղված այլ ապացույցներ առկա չեն՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ընկերությանն անապրանք փաստաթղթեր դուրս գրելու իրավասախտում վերագրելն իրավաչափ չէ, հետևաբար վերջինս չէր կարող ենթարկվել Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարկային պատասխանատվության, ուստի, առկա են բավարար հիմքեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով դատարանները չեն իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, սխալ են գնահատել քրեական մինչդատական վարույթում տրված վկաների ցուցմունքների և ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 24.09.2019 թվականի թիվ 01-1219 գրության՝ որպես արժանահավատ ապացույցներ հանդիսանալու փաստը՝ թույլ տալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների խախտում, որն էլ իր հերթին այդ մասով հանգեցրել է գործի սխալ լուծման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության կողմից հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների ներկայացման համար վճարվել է համապատասխանաբար՝ 4.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, իսկ վճռաբեկ բողոքը և հայցը ենթակա են բավարարման մասնակի, արձանագրում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա են հատուցման Կոմիտեի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.09.2023 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 15.03.2022 թվականի վճիռը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասով անփոփոխ թողնելու մասը, և այս մասով այն փոփոխել՝ «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության 10.03.2021 թվականի թիվ 1002684/1 ակտի 24-րդ կետը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.09.2023 թվականի որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հօգուտ «ՀԱՏՄ» ՍՊ ընկերության բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված

պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

_____ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

Զեկուցող

_____ **Ք. ՄԿՈՅԱՆ**

_____ **Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

_____ **Լ. ՀԱԿՈՐՅԱՆ**

_____ **Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ**